Ս. Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՂԱԶԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Արարատյան բարբառը հայերենագիտության մեջ ընդհանուր ճանաչում է գտել որպես գրական լեզվի հիմք։ Միանգամայն բնական կլիներ, որ մեծ պատմություն ունեցող հայ բարբառագիտությունը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրած լիներ այդ բարբառը՝ ենթաբարբառներով ու խոսվածքներով հանդերձ, սակայն այլ է իրական վիճակը։

1910 թ. մեծանուն հայագետ Հր. Աճառյանը նշում էր, որ հակառակ իր կարևորության, Երևանի բարբառը, ինչպես և իր երեք ենթաբարբառները դեռ ուսումնասիրված չեն[1]։ Այդ նույնն է ընդգծել նա նաև հետագայում[2]։

Դեռ այսօր էլ Արարատյան բարբառը մնում է որպես մեր լեզվի, եթե չասենք չուսումնասիրված, ապա՝ քիչ ուսումնասիրված բարբառներից մեկը։

Նրա որևէ ենթաբարբառ կամ խոսվածք առանձին հետազոտության առարկա չի դարձել, իսկ շատերն էլ, ընդհանրապես, դուրս են մնացել տեսադաշտից։

Արարատյան բարբառին անդրադարձել է Հր. Աճառյանը։ Հեղինակը ուրվագծել է Երևանի բարբառի հիմնական հատկանիշները, այնուհետև կանգ առնելով Աստապատի, Թավրիզի, Բայազետի խոսվածքների բնորոշ կողմերի վրա՝ բերել է նմուշներ այդ, ինչպես և՝ Ն. Բայազետի ու Լոռվա խոսվածքներից[3]։

Պրոֆ. Հ. Աճառյանի վկայությամբ, այն տարածությունը, որի վրա խոսում են Արարատյան բարբառով, «Հարավից տարածվում է և մտնում է Պարսկաստան, Ատրպատական, արևմուտքից՝ Կաղզվան, մեջն առնելով նաև Սուրմալուի գյուղերը (բացի Իգդիրի շրջանից, որը Խոյի գաղթականությունն է), հարավ-արևմուտքից մտնում է Արևմտահայաստան և հասնում մինչև հին Բայազետ, հյուսիսային և հարավային կողմերից շփվում է Կարնո և Ղարաբաղի բարբառների հետ, որոնք իր այս երկու սահմաններն են գծում։ Հյուսիսային կողմից ձևացնում է մի առանձին կղզյակ Բորչալվի գավառում (Շամշադինի մի մասը, Լոռի և շրջանները)»։

Աճառյանը բարբառի հիմնական կենտրոններն է համարում Երևանը, Նորքը, Քանաքեռը, Էջմիածինը, Օշականը և Աշտարակը[4]։

Արարատյան բարբառի տեղակայման մասին պրոֆ. Ա. Ղարիբյանը գրել է. «Արարատյան բարբառով խոսում են Արարատյան դաշտում, Վայոց ձորում, Նոր Բայազետի, Լոռու և Սպիտակի շրջաններում։ Գրականությունից

---

1 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ և գասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), Էմինյան Ազգագրական ժողովածու, հ. Ը, էջ 46։

2 Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 330։

3 Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, էջ 37—51։

4 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 329։

հայտնի է, որ Արարատյան բարբառով խոսում էին Սուրմալվի ու Կաղզվանի շրջանները»։

Այնուհետև. «Արարատյան բարբառով խոսող քիչ թե շատ մեծ քանակությամբ գյուղեր գտնվում են Երևանի, Կոտայքի, Վաղարշապատի և Աշտարակի շրջաններում։ Արարատյան բարբառով խոսում են լոռեցիները»։ Հեղինակը նշում է նաև, որ Արարատյան բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում, Հոկտեմբերյանի շրջանի գյուղերում...[5]։

Արարատյան բարբառի տեղակայման մասին նույն կարծիքն է հայտնել Ա.Հ. Գրիգորյանը[6]։

Հայերենի այս ամենահին բարբառներից մեկը չափազանց լայն տարածում ունի, սակայն փաստերը վկայում են, որ բնութագրող եզրակացությունները խարսխված են եղել սակավաթիվ վայրերի, ենթաբարբառների ու խոսվածքների վրա։ Բազմաթիվ շրջաններ, հարյուրավոր գյուղեր, ավաններ, բնակավայրեր, որոնց բնակչությունը խոսում է Արարատյան բարբառով, նրա այս կամ այն ենթաբարբառով ու խոսվածքով դուրս են մնացել տեսադաշտից։ Ճիշտ է, Արարատյան բարբառի մասին խոսելիս հիշատակվել են նաև այդ շրջանների անունները (Լոռի, Ալավերդի, Նոյեմբերյան, Սպիտակ, Հոկտեմբերյան), սակայն այդ խոսվածքները չեն ուսումնասիրվել։

Տալով մի քանի չուսումնասիրված շրջանների բարբառային ուրվանկարը՝ համառոտակի կանգ առնենք Արարատյան բարբառի՝ Հոկտեմբերյանի, Սուրմալուի, Նոյեմբերյանի, Ալավերդու, Սպիտակի, Կարմիրի խոսվածքների վրա, որոնք հետաքրքրական են և լրացնում, ամբողջացնում ու ճշտում են Արարատյան բարբառի մասին մինչ այս ասվածը։

Հոկտեմբերյանը մեր հանրապետության մեծ շրջաններից է. ունի մոտ քառասուն բնակավայր։ Շրջանը չափազանց հետաքրքրական է բարբառային ողջ նկարագրով ընդհանրապես և՝ որպես Արարատյան բարբառի, նրա ենթաբարբառների ու խոսվածքների տեղակայման վայր՝ մասնավորապես։

Ըստ բարբառային նկարագրի, շրջանի գյուղերը բաժանվում են որոշակի խմբերի[7]։

1. Արարատյան բարբառի ենթաբարբառներով և խոսվածքներով խոսող գյուղեր.

ա) Արարատյան բարբառի խոսվածքներով՝ Նալբանդյան (Մ. Շահրիար), Փոքր Շահրիար, Այգեշատ (Ղուզիգիդան), Արազափ (Էվջիլար), Մարգարա. Վարդանաշեն (Ջիբխչի), Տանձուտ (Արմտլու), Հայկավան (Թափադիբի), Արգավանդ (Ուզունօբա), Արմավիր (Ղուրդուղուլի).

բ) Արարատյան բարբառի՝ Բայազետի ենթաբարբառներով՝ Մրգաշատ (Գեչոլու), Ջանֆիդա.

գ) Արարատյան բարբառի՝ Բագրանի ենթաբարբառով՝ Բախչալար, Խերիբեկլու.

դ) Արարատյան բարբառի՝ Սուրմալուի ենթաբարբառով՝ Էրասխաձոն (Ղուռի Արաղ), Վարդանաշեն, Նալբանդյան, Հայկավան, Սովետական, Շենավան, Գետաշեն։

---

5 Ա.Ռ. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 219։

6 Ա.Հ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 205։

7 Սույն բաժանումը կատարելիս, պարզ է, նկատի ենք ունեցել խոսվածքի, ենթաբարբառի հիմնական տրակը։

2. Արարատյան և «կը» ճյուղի, հատկապես Մշո բարբառի խառնուրդ ներկայացնող խոսվածքով՝ Շենավան (Քյալագյարխ)։

3. Մշո և այլ բարբառներով՝ Բամբակաշատ (Մոլլաբայազետ), Հոկտեմբերյան գ. (Սարդարապատ), Նորապատ, Շախվառուտ, Սովետական։

4. 1927—1928 թթ. կազմակերպված մի քանի գյուղեր, որտեղ բնակություն են հաստատել մեր հանրապետության զանազան՝ հիմնականում լեռնային շրջաններից եկածներ։ Վերջիններս բարբառագիտական տեսակետից որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում։

Ալավերդու, Նոյեմբերյանի, Կիրովականի, Ստեփանավանի շրջանները Սպիտակի շրջանի մի քանի գյուղերի հետ միասին կազմում են պատմական Տաշիրքը՝ Լոռին։

Գրականության մեջ նշված է, որ Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն[8]. իսկապես, Լոռին, հատկապես, Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանները, այն եզակի վայրերից են, որոնք աչքի են ընկնում ու գրավում են ուսումնասիրողին բարբառի միատարրությամբ և լավ պահպանված լինելով։

Լեռնածերպերում ծվարած այնպիսի գյուղեր, ինչպիսիք են Աթանն ու Ահնիձորը, Ճոճկանն ու Շնողը, Ջիլիգան ու Կաճաճկուտը, Լորուտն ու Շամուտը (Ալավերդի), Արճիշն ու Ղոշխոթանը, Բաղանիսն ու Ջուջևանը, Կողբն ու Ղալաչան (Նոյեմբերյան) Արարատյան բարբառի՝ Լոռվա խոսվածքի շտեմարաններ են և ցանկալի վայր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են մեր լեզվի բարբառներով։ Այս դեպքում պետք է աչքաթող չանել այն հանգամանքը, որ մեր հանրապետության շրջանների ճնշող մեծամասնությունը բնութագրվում է բարբառների ու խոսվածքների բազմապիսությամբ, բազմազանությամբ, որը խաթարում է դրանցից յուրաքանչյուրի անաղարտությունը։

Ալավերդու շրջանը (Մոտկորի, Ուզունլարի, Շնողի ենթաշրջաններով) բաղկացած է 35 գյուղից ու բնակելի կետից։ Դրանցից ութը օտարաբնակ ու խառնաբնակ են և, այս առումով, որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում։ Մ. Այրում, Փ. Այրում գյուղերում բնակվում են ադրբեջանցիներ, Վ. Ախթալա, Բենդիկ գյուղերում, Ախթալա ավանում, Շամլուղ գյուղում և ավանում՝ հույներ, ադրբեջանցիներ, ռուսներ։ Թումանյան ավանը 10—15 տարվա պատմություն ունի, և բանվորները, բացի շրջանի գյուղերից, եկել են և այլ վայրերից։ Մնացած գյուղերը՝ Աթանը, Շամուտը, Լորուտը, Ահնիձորը, Մարցը, Քարինջը, Թումանյանը (Դսեղ), Ջկալովը (Սադի-Բագդիի), Ուզունլարը (Օձուն), Ամոջը, Կ. Աղեգին, Մղարթը, Ղաչաղանը, Ծաթերը, Դանուշավանը (Այգեհատ, Իգահատ), Արդվին, Հագվին, Կաճաճկուտը, Աքորին, Ակները (Որնակ), Հաղբատը, Սանահինը, Ծաղկաշատը, Նեղոց գեղը, Շնողը, Թեղուտը, Ճոճկանը և Ջիլիգան խոսում են Լոռու խոսվածքով։ Յուրօրինակ և հետաքրքրական խումբ է կազմում միայն Մարց և Քարինջ գյուղերի խոսվածքը։

Նոյեմբերյանի (Բարանայի) շրջանը ունի հետևյալ բնակելի կետերը՝ Ոսկեպար, Գոմշավար, Բաղանիս, Կոթի, Ղոշխոթան, Ջուջևան, Նոյեմբերյան (կենտրոն), Դովեղ, Ղալաչա, Կողբ, Վ. Քյորփլու, Պտղավան, Լալվար, Դեբեղաշեն, Արճիշ, Լճկաձոր, Կողման, Միջին Քինթ։

---

8 Ա ր. Ղ ա ր ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, էջ 219։

Սրանցից Կոզմանը, Միջին Քինթը, Գոմշավարը անասնապահական վայրեր են կամ, ինչպես իրենք են ասում, «սար» են, որտեղ տեղակայվում են այս կամ այն գյուղի բնակիչները, Վերին և Ներքին Քյորփլուներում բնակվում են ադրբեջանցիներ, մնացած բոլոր գյուղերում խոսում են լավ պահպանված Լոռու խոսվածքով։

Արարատյան բարբառի ուսումնասիրության համար հետաքրքրական և ուսանելի է Սպիտակի (Համամլու) շրջանը։ Շրջանի 24 գյուղերից երկուսում՝ Սարալում ու Ղուրսալիում բնակվում են ադրբեջանցիներ։ Գյուղերի մեծ մասը խառնաբնակ է։ Բնակչության գերակշռող մասը բասենցի է (կը ճյուղի Կարնո բարբառի ենթաբարբառ, որը նույնպես չի ուսումնասիրված), կան նաև մշեցիներ, վանեցիներ, զարսեցիներ և այլն։ Այս շրջանում վեց գյուղի խոսվածքն է պատկանում Արարատյան բարբառին. այդ գյուղերն են՝ Մեծ Պարնի, Գոգարան, Կաթնաջուր, Ջիգդամալ, Լեռնանցք և Սպիտակ (շրջկենտրոն)։ Այդ բարբառով է խոսում և Շենավան գյուղի կեսը։ Շրջանի Քարաձոր գյուղը ոչ շատ վաղուց գաղթել է Կիրովականից և խոսում է այդ բարբառով։ Հետաքրքրականը այն է, որ այսքան սակավաթիվ գյուղեր Արարատյան բարբառի այլևայլ խոսվածքներ են ներկայացնում։

Լոռվա խոսվածքն է Մ. Պարնի և Գոգարան գյուղերում։ Կաթնաջուր գյուղը խոսում է Քանաքեռի խոսվածքով, ունենալով որոշ տարբեր Աշտարակից։ Սպիտակ, Ջիգդամալ, Լեռնանցք գյուղերի խոսվածքը հնչյունական համակարգով նման լինելով Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր, Արգավանդ գյուղերի խոսվածքին, ձայնավորների հնչյունափոխությամբ նույնանում է Լոռու բարբառի հետ, ձևաբանական իրողություններով Լոռու և վերոհիշյալ խոսվածքների մի խառնուրդ է ներկայացնում։

Արարատյան բարբառով խոսող գյուղեր կան և Կարմիրի շրջանում։ Արարատյան բարբառով այստեղ խոսում են Հին և Նոր Բաշքենդ, Ներքին և Վերին Ճամբարակ, Օրջոնիկիձե և Թթուջուր գյուղերի բնակիչները։

Այսպիսով, Հոկտեմբերյանի, Նոյեմբերյանի, Ալավերդու, Սպիտակի, Կարմիրի շրջանների ութ տասնյակ գյուղերում խոսում են Արարատյան բարբառի խոսվածքներով։ Դրանցից և ոչ մեկը չի ուսումնասիրվել, այս կամ այն առիթով հիշատակվել է մի երկուսի անունը միայն։

Արարատյան բարբառի տերիտորիալ լայնահունությունը ընդգծելով հանդերձ՝ ուսումնասիրությունները դուրս չեն եկել Արարատյան դաշտից, որը նույնպես լրիվ չի ուսումնասիրվել։ Հետևանքը եղել է այն, որ Արարատյան բարբառը չի պատկերվել այնպես, ինչպիսին այն կա իր ամբողջության մեջ։

Բարբառագիտական գրականության մեջ Արարատյան բարբառը համարվել է քառաստիճան բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառ[10]։

Հնարավոր է, որ հետագա ուսումնասիրությունները երևան հանեն մեր լեզվի այս ամենամեծ բարբառի նոր հատկանիշներ, սակայն լինելով Կոտայքի, Աշտարակի, Բայազետի, Ստեփանավանի, Հոկտեմբերյանի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Սպիտակի, Կարմիրի շրջանների գյուղերում, ծանոթանալով դրանց բարբառային ուրվանկարին, հատկապես Արարատյան բարբառին ու նրա խոսվածքներին, եկել ենք այն խորին համոզման, որ Արարատյան բար-

10 Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, էջ 330։ Ա ր. Ղ ա ր ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, էջ 218, 221։ Ա. Գ ր ի գ ո ր յ ա ն, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 206։ 2*

բառը չպետք է համարել այս կամ այն աստիճանի բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ: Այն՝ հայերենի բարբառների հնչյունական համակարգերի համընդհանուր մի պատկեր է ներկայացնում:

Մեր լեզվի բազմաթիվ բարբառների իրողությունների դրսևորմանը ականատես ենք լինում Արարատյան բարբառի և նրա խոսվածքների ոչ միայն բաղաձայնական համակարգում: Արարատյան բարբառն ու նրա խոսվածքները շտեմարանն են հայերենի բարբառների հնչյունական, ձևաբանական շատ ու շատ երևույթների, սակայն այստեղ կանգ կառնենք բաղաձայնական համակարգի ու նրա տարատեսակությունների վրա, որպես բարբառներն ու խոսվածքները տարորոշող կարևորագույն հատկանիշներից մեկը:

Եթե բարբառագիտությանը ծանոթ շրջանների խոսվածքներն ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ, ապա մեր հանրապետության շրջաններում և գյուղերում Արարատյան բարբառի՝ քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող ենթաբարբառների ու խոսվածքների կողքին առկա են նաև որոշակի տարատեսակություններ:

Մեր ուսումնասիրածներից քառաստիճան բաղաձայնական սիստեմ ունեն Նոյեմբերյանի, Ալավերդու (բացի Մարցից ու Քարինջից), Սպիտակի Կաթնաջուր, Հոկտեմբերյանի Փ. Շահրիար, Հայկավան, Արազափ գյուղերի խոսվածքները, նույն շրջանում և հատկապես՝ Երասխահանում, Վարդանաշենում, Նալբանդյանում, Հայկավանում, Սովետականում, Գետաշենում, տեղակայված՝ Արարատյան բարբառի, Սուրմալուի, ինչպես և Խերիբեկլու, Բախչալար գյուղերում, տեղակայված՝ Բագրանի ենթաբարբառները:

Նուաստիճան բաղաձայնական սիստեմ ունեն՝ *Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան, Այգեշատ, Տանձուտ, Վարդանաշեն, Սպիտակի շրջանի Մ. Պարնի, Գոգարան գյուղերի խոսվածքները և* երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ ունեն՝ *Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր, Արգավանդ, Ալավերդու շրջանի Մարց ու Քարինջ, Սպիտակի շրջանի Լեռնանցք, Ջիգդամալ, Սպիտակ, Շենավան, Կարմիրի շրջանի Հին ու Նոր Բաշքենդ, Օրջոնիկիձե, Թթուջուր, Վերին և Ներքին Ճամբարակ գյուղերի խոսվածքները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևանի (Նորքով և Կոնդով) խոսվածքը ևս երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնների համակարգ ունի: Անհրաժեշտ է նշել, որ քառաստիճան բաղաձայնական համակարգ հասկացողությունը բավականին առաձգական է: Ձայնեղ պայթականների շնչեղացումը հայերենի տարբեր բարբառներում ու խոսվածքներում տեղի է ունենում ոչ հավասար ուժգնությամբ: Այս երևույթը հատկապես նկատելի էր այն շրջաններում, գյուղերում, որոնց ենթաբարբառներն ենք ուսումնասիրել:*

Շնչեղացումը չափազանց ուժեղ է Բայպետի, Ալավերդու, Սուրմալուի, Բագրանի, այնուհետև՝ Նոյեմբերյանի խոսվածքներում: Սպիտակի Կաթնաջուր գյուղում այն շատ է զգալի, բայց որքան էլ սարոբինակ թվա, նկարագրով Լոռվա խոսվածքին պատկանող Մ. Պարնի և Գոգարան գյուղերի խոսվածքը ունի երեաստիճան բաղաձայնական սիստեմ և հատուկենտ դեպքերում առկայծում են քառաստիճանության մնացորդները: Այս գյուղերի օրինակները գալիս են ասելու, որ բարբառների, խոսվածքների բաղաձայնական համակարգերը, ժամանակի ընթացքում կարող են և փոփոխվել: Ձայնեղ պայթականների շնչեղացումը թույլ է Հոկտեմբերյանի շրջանի Փ. Շահրիար, Արազափ, Մարգարա, Հայկավան գյուղերի խոսվածքներում:

Ինքնին հասկանալի է, որ սովորական ականջով բացորոշվող այս տարբերությունները միանգամայն կընդգծվեն, եթե այս բարբառի խոսվածքների բաղաձայնական համակարգերը դառնան մանրակրկիտ հնչյունաբանական ուսումնասիրության առարկա։

Այսպես ուրեմն, գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ պայթականների դիմաց բառասկզբում շնչեղ ձայնեղներ՝ բ՝, գ՝, դ՝, ձ՝, ջ՝ ունեն Ալավերդու (բացի Մարց ու Քարինջ), Նոյեմբերյանի, Հոկտեմբերյանի՝ Փ. Շահիրար, Հայկավան, Մարգարա, Արագափ, Սպիտակի՝ Կաթնաջուր գյուղերի խոսվածքները, ինչպես նաև Սուրմալուի խոսվածքը։

Ձայնեղները մնում են անփոփոխ Հոկտեմբերյանի՝ Նալբանդյան, Այգեշատ, Տանձուտ, Վարդանաշեն, Սպիտակի շրջանի Մ. Պարնի, Գոգարան գյուղերի խոսվածքներում և դրանց դիմաց՝ խուլ պայթականներ քմայիններ ունեն Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր, Արգավանդ, Ալավերդու շրջանի՝ Մարց, Քարինջ և Սպիտակի շրջանի Սպիտակ, Լեռնանցք, Ջիգդամալ, Կարմիրի շրջանի Հին և Նոր Բաշքենդ, Վերին և Ներքին Ճամբարակ, Կաթնաջուր և Օրջոնիկիձե գյուղերի խոսվածքները։

Բերենք մի քանի օրինակ եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող խոսվածքներից.

Բաժանել[11] > Փ. Շ. բ՝աժանիլ, Հ. Արզ. Մ. բ՝աժնէլ, Սու. բ՝աժնել, Ալ. Կ. Ն. բ՝ըժանիլ, Նալ. բաժնիլ, Ա. Տ. Վ. բաժնէլ, Տ. Պ. Գ. բըժանիլ, բերան > Փ. Շ. Հ. Մ. Ա. Կ. բ՝էրան, Սն. Ալ. բ՝երան, Նալ. Այգ Տ. Վ. Մ. Պ. Գ. բէրան, բուն > Փ. Շ. Հ. Մ. Ա. Կ. Ալ. Ն. Սու. բ՝ուն, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. բուն, բան > Փ. Շ. Հ. Մ. Ա. Կ. Ս. բ՝ան, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. բան, գայլ > Ա. Փ. Շ. Հ. Մ. Ս. Կ. Ալ. Ն. գ՝էլ, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. գէլ, գարի > Ա. Փ. Շ. Հ. Մ. Ս. Ալ. Ն. Կ. գ՝արի, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. գարի, գառն > Ա. Փ. Շ. Հ. Մ. Ս. Կ. գ՝առ, Ալ. Ն. գ՝առը, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. գառ, գողանալ > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Կ. Ն. Ալ. գ՝ողանալ, դառ > Ա. Փ. Շ. Հ. Մ. Ս. Կ. դ՝առ, Ալ. Ն. դ՝առը, դառնը, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. դառ, դուռն > Ա. Փ. Շ. Հ. Մ. Ս. Կ. դ՝ուռ, Ալ. Ն. դ՝ուռը, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. դուռը, դանակ > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Մ. Ալ. Ն. դ՝անակ, Նալ. Այգ. Գ. Տ. Վ. Մ. Պ. դանակ, դարբին > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Կ. Ալ. Ն. դ՝արփին, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. դարփին, ձուն > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. ձ՝ուն, Ալ. Ն. Կ. ձ՝ին, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. ձուն, Մ. Պ. Գ. ձին, ձու > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Ալ. Կ. ձ՝ու, Նալ. Այգ. Տ. Վ. ձուն, Մ. Պ. Գ. ձին, ձուկն > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. ձ՝ուգ, Ալ. Ն. Կ. ձ՝ուգը, Նալ. Այգ. Տ. Վ. ձուգ, Մ. Պ. Գ. ձուգը, ձի > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Ալ. Ն. Կ. ձ՝ի, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. ձի, ջուր > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Ալ. Ն. Կ. ջ՝ուր, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. ջուր, ջիլ > Ա. Փ. Շ. Հ. Մ. Սու. Ալ. Ն. Կ. ջ՝իլ, Նալ. Այգ. Տ. Վ. Մ. Պ. Գ. ջիլ։

Արարատյան բարբառի քառաստիճան և եռաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող խոսվածքների հնչյունական համակարգերի մեջ շեղումներ, տարատեսակություններ չկան, եթե հաշվի չառնենք ուշադրության արժանացած այն հանգամանքը, որ ձայնեղների շնչեղացումը որոշ խոսվածքներում չափազանց ուժեղ է, իսկ որոշ խոսվածքներում՝ ավելի թույլ։

11 Համառոտագրությունները. Այգ— Այգեշատ, Արգ.— Արգավանդ, Արմ.— Արմավիր, Ա. — Արագափ, Հ. — Հայկավան, Մ. — Մարգարա, Փ. Շ. — Փոքր Շահրիար, Տ. — Տանձուտ, Վ.— Վարդանաշեն, Նալ.— Նալբանդյան, Սու.— Սուրմալու, Սպ.— Սպիտակ, Լ.— Լեռնանցք, Ջ. —Ջիգդամալ, Կ. —Կաթնաջուր, Մ. Պ. —Մեծ Պարնի, Գ. —Գոգարան, Ն. —Նոյեմբերյան, Ալ. — Ալավերդի, Մրց. — Մարց, Ք. — Քարինջ։

Միանգամայն այլ է վիճակը Երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող խոսվածքներում։ Ինչպես նշել ենք, դրանք են՝ Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր և Արգավանդ, Սպիտակի շրջանի Ջիգդամալ, Սպիտակ, Լեռնանցք, Շենավան (գյուղի կեսը), Ալավերդու շրջանի Մարց և Քարինջ և Կարմիրի շրջանի Հին և Նոր Բաշքենդ, Օրջոնիկիձե, Թթուջուր, Ներքին և Վերին Ճամբարակ գյուղերի խոսվածքները։

Սրանք բաժանվում են երկու, իրարից որոշակիորեն սահմանազատվող խմբերի։

Առաջին խմբի մեջ դասում ենք Հոկտեմբերյանի շրջանի Արգավանդ, Արմավիր և Սպիտակի շրջանի Ջիգդամալ, Սպիտակ (Շենավան), Լեռնանցք գյուղերի խոսվածքները։ Երկրորդ խմբի մեջ՝ Ալավերդու շրջանի Մարց, Քարինջ, Կարմիրի շրջանի Հին, Նոր Բաշքենդ, Վերին, Ներքին Ճամբարակ, Թթուջուր և Օրջոնիկիձե գյուղերի խոսվածքները։

Առաջին խմբի խոսվածքներում օրինաչափականը գրաբարյան ձայնեղ պայթականների դիմաց խուլերի առկայությունն է։ Այս առումով Արմավիր և Արգավանդ գյուղերի խոսվածքները չափազանց միօրինակություն են պահպանում. բացի մի քանի գրական և օտար բառերից (բէմ, բէդ, բբխալ, գիր, գիրք, դատ, դաթար, դաղաստան), մնացած դեպքերում ձայնեղ պայթականների դիմաց առկա են խուլեր, հագվադեպ՝ քմայիններ և շնչեղ խուլեր (կյաղար, քրշէր, քրթնէլ)։ Օրինաչափությունն այստեղ այնքան գործուն է, որ ձայնեղների դիմաց խուլեր կան բազմաթիվ գրական փոխառություններում, մի բան, որ նկատելի չէ այլ խոսվածքներում։

Այս խոսվածքին բաղաձայնական համակարգով բավականին նման են Սպիտակ, Լեռնանցք և Ջիգդամալ գյուղերի խոսվածքները, սակայն ձայնեղ պայթականների դիմաց խուլ հնչյուններ ունենալով հանդերձ Սպիտակի այս խոսվածքները անհամեմատ շատ դեպքերում պահպանում են ձայնեղ հնչյունները, մի բան, որ չի նկատվում Արմավիր և Արգավանդ գյուղերի խոսվածքներում։ Այսպես. պան<բան, պարակ, գ<բարակ, պրլանիք<բանալի, պարօվ<բարեաւ, պաոց<բարձ, պէռ<բեռն, պիթ<բոյթ, պուն<բույն, պուոր<բուռն, պրոթօտ<բրդոտ, պրնակալ<բունկալ, պօց<բոց, պրոնիլ<բոնել-ի հետ միասին խոսվածքն ունի բաղնիք, բաղաջ, բամբակ+գ+ք, բամբասանք, բանջար, բախշիլ, բարէգամ, բարիգէնթան, բաժանիլ, բախտ, բէմ, բբրուդ բառաձևերը, որտեղ բառասկզբի ձայնեղ պայթականը մնացել է անփոփոխ։ Կամ՝ կաոր<գաոն, կարի<գարի, կարունքը<գարուն, կինի<գինի, կէղը<գիւղ, կիր<գիր, կբլուխ<գլուխ, կոմ<գոմ, կող<գող, բայց՝ գաղափար, գաղդազան, գանգաղ, գէղին, գէրանդու, գէրէգման, գէշ, գէրի, գօրձ, գօրդրնուգ և այլն։ Նույնն է վիճակը և մյուս ձայնեղներով սկսվող բառերում։

Սպիտակի շրջանի խոսվածքների բաղաձայնական համակարգում նկատելի է նաև հետևյալ երևույթը։ Ձայնեղ պայթականների դիմաց խուլ պայթականներ, շնչեղ խուլեր և քմայիններ ունենալու հետ միասին, այդ նույն հնչյունների դիմաց, մի քանի դեպքերում, առկա են շնչեղ ձայնեղ պայթականներ։ Այսպես. գարձել>գ՚օրձիլ, դեղ>դ՚էղ, դժողք>դ՚բժոխկ, դիզել>դ՚իզիլ, դիմանալ>դի՚մանալ>դիպնիլ>դիպչի՚լ, դրախտ>դ՚բրախտ, ձուկն>ձ՚ուգբ, ջոկ>ջ՚օգ, ջնջել>ջ՚ընջիլ, ջոկել>ջ՚ոգիլ։

Այսօրինակ երևույթ չի նկատվում Արարատյան բարբառի երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող և ոչ մի այլ խոսված-

քում։ Եթե չենք սխալվում, այն չի նկատված և որևէ այլ խոսվածքում՝ կամ բարբառում։

Ինչ վերաբերում է ձայնեղ պայթականների դիմաց շնչեղ խուլերի առկայությանը, ապա ոչ միայն վերոհիշյալ, այլև Արարատյան բարբառի գրեթե բոլոր խոսվածքներում, անկախ նրանից քառաստիճան, եռաստիճան թե երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեն նրանք, միշտ էլ մի քանի բառերում (քրթալ, քրշէր, քրշէրհանա, քրթնիլ, փրոթիլ) առկա են շնչեղ խուլեր։

Սկզբունքորեն դեմ ենք մեկ կամ երկու զանազանվող հատկանիշներ նկատի ունենալով այս կամ այն բարբառ, խոսվածքը նոր համարելով՝ մեր լեզվի առանց այն էլ բազմաթիվ բարբառներն ու խոսվածքները ավելի քան բազմացնելու ձգտմանը։ Հակառակ դեպքում պետք է նշեինք, որ երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող խոսվածքների մյուս խումբը նոր խոսվածքներ են և մի նոր օղակ են կազմում մի կողմից Արարատյան բարբառի երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող խոսվածքների և մյուս կողմից՝ Ղարաբաղի բարբառի միջև։ Ենթախոսվածք, միջխոսվածք կամ մի այլ բան, ինչպես կուզեք անվանեցեք դրանք, բայց մի բան ակնհայտ է, որ մինչև այժմ եղած ուսումնասիրությունները Արարատյան բարբառի մասին իրենց խոսքն ասելիս նման օրինակ չեն նշել։ Բաղաձայններով որոշ առումով նման լինելով Ղարաբաղի բարբառին այդ խոսվածքներն հնչյունափոխությամբ, ինչպես և ձևաբանական կարևորագույն հատկանիշներով Արարատյան բարբառի խոսվածք են։

Որո՞նք են Մարց, Քարինջ, Հին, Նոր Բաշքենդ, Օրջոնիկիձե, Վերին, Ներքին Ճամբարակ և Թթուջուր գյուղերի խոսվածքների բաղաձայնական համակարգի ամենաբնորոշ գծերը։

Նախորդ խոսվածքների նման խուլ պայթականներ ունենալով ձայնեղների դիմաց այս խոսվածքներում չափազանց ընդգծված են նաև քմայինները։ Այսպես. պաժին<բաժին, պէրան<բերան, պիթ<բոյթ, պէռ< (Մ. Ք.), պրէռ, բեռ, պարէկամ<բարեկամ, պարօվ<բարեաւ, պառց<բարձ, պարակ<բարակ, պ՚ան<բան, պ՚ուն<բոյն, պ՚ուռ<բուռն։

Քմայինների առկայությունը շատ ավելի օրինաչափական է Մարցի և Քարինջի խոսվածքի համար։ Այս բոլոր խոսվածքներում քմայնացումը շատ ավելի է Գ-ի հնչյունափոխության դեպքում, երբ մեծ մասամբ հատկապես Մարցում և Քարինջում գ>կ-ի հետ առկա է և կ՚. այսպես. կ՚ազար<գազար, կ՚առր (Մ. Ք.), կառը<գառն, կ՚արի (Մ. Ք.), կարի<գարի, կ՚արունքը (Մ. Ք.), կարունքը<գարնանը, կէրան<գերան, կ՚անկ՚ատ<գանգատ, կ՚օք<գոգ, կ՚օղ<գող, կ՚օմ<գոմ, կ՚օռալ<գոռալ, կ՚օրտընուկ<գորտնուկ։

Դ, ձ, ջ ձայնեղ պայթականների դիմաց ևս առկա են հիմնականում խուլ, երբեմն նաև՝ քմային հնչյուններ։

Բառամիջում և բառավերջում այս հնչյունները իրենց կրած փոփոխություններով նորություն չեն մտցնում մեր բարբառների հնչյունափոխության մեջ։ Նույնը մնալով ոնգայիններից հետո, նրանց դիմաց կան շնչեղ խուլեր Ր ձայնորդից հետո։

Գրաբարյան խուլ պայթականներին՝ պ կ տ ծ ճ-ին այս բոլոր խոսվածքներում բառասկզբում համապատասխանում են խուլ պայթականներ։

Առհասարակ Արարատյան բարբառի վերոհիշյալ խոսվածքների գերակշիռ

մասին հատկանշական չէ խուլերի ձայնեղացումը բառամիջում և բառավերջում:

Ձայնեղացումը բառամիջում և բառավերջում, որպես օրինաչափություն, կա Սուրմալուի ենթաբարբառում, ինչպես և՝ Մարգարայի և Հայկավանի խոսվածքներում։ Ձայնեղացումը նկատելի է նաև Վարդանաշենի և Նալբանդյանի խոսվածքներում։ Խուլերի ձայնեղացումը չկա Արմավիրի, Արգավանդի, Արազափի, Տանձուտի, Փ. Շահրիարի խոսվածքներում։ Իսկ եթե բառը սկսվում է խուլ պայթականով, ապա հաճախ նույնիսկ Հայկավանի և Մարգարայի խոսվածքներում խուլերը բառամիջում և բառավերջում մնում են խուլ։ Օրինակ. ճակատ >ճակատ, կասկած>կածկած, ծեծ>ծէծ, կարկուտ>կարկուտ։

Բառավերջում խուլերի ձայնեղացումը Այգեշատի խոսվածքում կա ազ, իգ, ուգ վերջածանցներում և հաճախ էլ՝ ձայնեղացման հետ միասին նույն բառում, նույնիսկ նույն բառախոսի մոտ առկա է խուլը խուլ հնչելու բացահայտ երևույթը։ Այսպիսով, Հոկտեմբերյանի տաս խոսվածքներից յոթում՝ Արմավիրի, Արգավանդի, Տանձուտի, Փ. Շահրիարի, Վարդանաշենի, Նալբանդյանի, Արազափի խոսվածքներում խուլերի ձայնեղացում չկա և կամ հազվադեպ երևույթ է։ Խուլերի ձայնեղացումը հատկանշական չէ նաև Ալավերդու, Նոյեմբերյանի, Սպիտակի և Կարմիրի խոսվածքներին։

Խուլ պայթականները, ձայնեղ շփականներն ու ձայնորդները ներկայացնում են հնչյունական այն խմբերը, որոնք ինչպես հայերենի մյուս բարբառներում, այնպես էլ վերոհիշյալ խոսվածքներում քիչ են փոփոխվել։

Խոսվածքների համար տարբերիչ են միայն ձայնեղ և խուլ Հ հնչյունները։

Արարատյան բարբառի խոսվածքներում առկա է հ>խ, ֆ հնչյունափոխությունը։

Հ-ի դիմաց խ ունեն Հոկտեմբերյանի Փ. Շ. Ն. Այգ. Հ. Մ. գյուղերի խոսվածքները։

Մյուս խոսվածքներում Հ-ի դիմաց կա կամ Հ, կամ՝ ֆ։

Հ-ի դիմաց Հ ունեն Հոկտեմբերյանի շրջանի մյուս գյուղերը և Կարմիրի շրջանը, իսկ Ալավերդում, Նոյեմբերյանում, Սպիտակի շրջանի խոսվածքներում Հ-ին համապատասխանում է ֆ։ Հո հնչյունախմբում ֆող, ֆորթ, ֆոր, ֆոքի, ֆոքէվորթի և այլն։

Բացի խուլ Հ-ից Հոկտեմբերյանի խոսվածքներից մի քանիսը ունեն նաև ձայնեղ յ, որը ավելացել է բացառապես բառասկզբում, ա, ե, ի, ը ձայնավորներից առաջ։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ յ-ն այնքան էլ տարածված չէ, եթե համեմատում ենք կողք-կողքի ապրող այլ խոսվածքների, հատկապես Սուրմալուի խոսվածքների հետ։

Այստեղ փոքր թիվ են կազմում այն բառերը, որոնց ավելանում է յ։ Օրինակ. անութ>յունթ, երեկո>յիրիգուն, ականջ>Վ. Տ.յանգաջ, աղբյուր>Այգ. Տ. Վ. Ն. Փ. Շ. Ա.յախպուր, անկանիլ>Տ. Վ. Ա. Հ. Մ. յընգրնէլ, աչք>Այգ Տ. Վ. Ն. յաշկ. Հ. աշք. երկայն Վ. Հ. Մ. յէրգէն, Այգ. լէրգար, Տ. երկար. իր>Հ. յիրա, յիմանալ>Ա.. Հ. յիմանալ, յիմաստուն>լիմաստուն։

Ձայնեղ յ-ն ընդգծվածորեն կա նաև Սպիտակի շրջանի Կաթնաջուր գյուղի խոսվածքում, իսկ մյուս խոսվածքներում այն հանդիպում է սակավաթիվ բառերի սկզբում։

Նոյեմբերյանի և Ալավերդու խոսվածքների համեմատությունից պարզվում է, որ ձայնեղ յ-ն վերջինում շատ ավելի տարածուն կիրառություն ունի, քան՝ Ալավերդում։

Ձայնեղ Հ-ն ընդգծված է Կարմիրի շրջանի, ինչպես և Մարց ու Քարինջ գյուղերի խոսվածքում. այսպես հրմանչրիլ, հրմանչկոտ, հանիծ, հանրէր, հանդ, հափուռ (բուռ), հէրինջ, հրնգէր, հրնդրրէլ, հոչիլ, հոչլոտ, հրլորրլէլ, հրպարապ (պարապ), հաքի (ագի)։

* * *

Ինքնին հասկանալի է, որ մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ վերջնական եզրահանգումների իրավունք տվող մանրամասնությամբ՝ նկարագրել Արարատյան բարբառի բազմաթիվ ու բազմազան խոսվածքների ողջ բաղաձայնական համակարգը, սակայն մեր ձեռքի տակ եղած մեծ քանակությամբ նյութերն ու նմուշները բերում են այն եզրակացության, որ Արարատյան բարբառը մինչ այժմ համարվել է միատարր քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ, որովհետև այդ բարբառով խոսող մի քանի տասնյակների հասնող գյուղերի խոսվածքները չեն ուսումնասիրվել։ Այդ բարբառը բնորոշող եզրակացությունները հիմնված են եղել սակավաթիվ վայրերի խոսվածքների մասին եղած տեղեկությունների վրա, որոնցից և ոչ մեկը մանրամասն, մենագրական ուսումնասիրության չի ենթարկվել։

Այժմ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արարատյան բարբառը հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերի գրեթե մի ընդհանրություն է ներկայացնում, քառաստիճան, եռաստիճան բաղաձայնական համակարգերի հետ միասին առկա են նաև երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող շատ խոսվածքներ, որոնք իրենց հերթին դրսևորում են հետաքրքրական տարատեսակություններ։

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Արարատյան բարբառի այս խոսվածքների մեջ դրսևորվում են նաև երկբարբառների, ձայնավորների հնչյունափոխությունների, ինչպես նաև ձևաբանական իրողությունների նույնպիսի բազմապիսություններ, որոնց կփորձենք անդրադառնալ մի այլ առիթով։ Հակամետ ենք կարծելու, որ ութ տասնյակ գյուղերի խոսվածքները ուսումնասիրելու ընթացքում, անշուշտ, կարող են թույլ տրված լինել անճշտություններ։

ՆՄՈՒՇՆԵՐ

Աբամվիր գյուղի խոսվածքով[13]

(ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ)

Կէղին սրրջանից մառթ էր էկէլ։ Մէր կէղի նախագահին ին ման կալի. կործ-պան ունին հետը։ Դէս նախագա, դէն նախագա, նախագա չրկա։ Կընացին կատարածուն կանչէն, կէղին չէր, կընացէլ էր էվջիլար, ընդի հրրոխպոր տրղա ունի։ Շափթի էս կրլոխը, էն կրլոխը կընում ա էտ կէղը։ Տէսամ վոր մառթ չրկա, վէ կացա յէս կընացիմ մէր նախագահի տունը, թէ ասէմ, կանչրմ էն։ Տու-

13 Տեղի սղության պատճառով՝ նմուշներ բերում ենք երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող խոսվածքներից։

որ կօխպած էր, պանցրացամ, լուսամուտիցը նայէցիմ, մարթ-մադաթ չրկա, ծէն-ծուն չի կալի, վայթե նախագահը հանգին ա, կընկանը տէհամ քուչըմը, ասում էմ.

— Ո՞ւրա նախագահը։

Կընիկը ասըմ ա.

— Կարունքը պացվել ա քըշէրով էթըմ ա, քըշէրով կալի, օ՞վ ա ընդրա իրէսը տէնրմ, օ՞վ ա գիգրմ հանգի՞նա, սրրջան՞ին ա, ո՞ւր ա։

Արգավանդ գյուղի խոսվածքով

(ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ)

Ամառ ժամանակ էր, հուլրսին, կալերի լավ վախտըն էր, էտ վախտը խէրրս կրնացէր էր ճուր անէլու։ Յէս ու քուրրս կըտուրր քընած ինք։ Լուսու տէմ զառթրնա, տէսա քուրրս տէղը չէր։ Տէղրս պացի, էլա նանարիս (մորը) պօռացի։

Մէրրս խընօցի էր հարրմ։

Ասի.

— Նանար, Սաթօն յո՞ւր ա։ Քըվօրրս անրմը Սաթօ էր։

Ասավ.

— Վայ, իմ տունը քանդրվավ, մարթակէլը տարէր ա։

Էտ վախտը մարթակէլ էր իջաթ էղէ, կէղէրիցը էրէխա էր փախցընըմ, տանրմ։

Հավար պօռաց, կէղացիքը էկան։

Աղօթրանի ճուղը ճրղվէր էր, կէղացիքը թափան, էկան, կրնացին, ման էկան, կէղի կըրաղը մէ հէկտար յօնջա սաղ տրրօրած էր, արունը յէլէր էր յօնջէն կրնացէր էր, էնգար յօնջի մէջը էտ միլաթը քաշքըշել էր քըվօրրս։

Իզը առան, կրնացին, տէհան, մօվի թրմբի վըրէն մըշկի վրրէն պառկած էր, աշկէրից արսունք էկէ, թափէր էր տօշին։ Կէղացիքը էկան, թափան վըրէն, լացան։ Ռէրրս ճրրի տէղիցը էկավ, տէհավ, պախը զարկէց խօղի մէջ, ուշկը կրնաց, ընգավ։ Քրվօրրս տարանք տունը։ Քրվօրրս էրկու բուդը էրկու բէրան տրվէր էր, մէկ էլ վոնների մանները թամիզ կէրէր էր։

Տէրությունը պէրէց խարիր խատ ղազախ տրրկց ղարաուլ։ Քրշէր-ցէրէկ ընգան նաղարով, զուռնով, Ղամարլրվով, կէղրանքով սաղ ման էկան, բալի խաննն։ Էրկու—իրեք ամիս մրնացին, վէռչը չրքրթան։ Թօղին, կրնացին։

Քրվօրրս էլ տարան խորէցին։ Քուր, քուր, բալի քուր, արէվին ասրմ էր. տու տուս մի գա։

Խէրրս կրծկրծու մէռավ, թամիզ քրվօրրս կրծկրծու մէռավ։ Կէղացրքով մէ տարի, էրկու տարի լացրմ ին, իրա թայդաշ ախչրկնէրը լացրմ ին, վոր քաշէլէն, տանջէլէն, չարչարէլէն մէռավ։

Ղարիբյան Հունան Մակարի, 70 տարեկան

Լեռնանցք գյուղի խոսվածքով

(ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆ)

Մի բըժիշկ էր էկէ մէր կէղը, տէքըրըս հիվանդ էր. պէրինք կուշտը։ Կօնչօլ ի էփէ, ասէց ուտում չէմ, մունդէլօվ կարտօլ էփէք։ էնա էկավ Վաղարշակը, ասի՝ էս ի՞նչ ա ասըմ, չէմ իմանըմ։ Ասէց.

— Մունդէլօվ կարտօլը անկըլպիլ կարտօլըն ա, պէ, լըվա, էփի, տու, ուտի։

Մէր կէղի ճըրէրին շատ էր հավանըմ։

Ընդուր պան ի ասըմ, հըմի միտըս չի։ Կընացէլ ի Րէվան, ծին էր էկէլ, մէր տունըն էլ մի ծօրի միչին էր. մէզ մի հըրէվան ունինք, էտ խաբարըըզիկը պէրէլ էր (մագնիտոֆոն), տըրէլ էր, յէս խօսըմ ի, տու մի ասիլ, տա կըրըմ ա։ Կըրէց, կըրէց, մին էլ տէսա իմ ասածը ասէց։

Մին էլ էն պիրէլ մէր կէղը տըրանից. Յէս պան ի ասըմ, կարունքվա կօղմըն էր, տաշտին ի, պատմըմ ի, տէ էլ կըրըմ էր։ Կէղացիքը մընացէլ ին շըվարած։

Ախչիկ ջան, տու պարօվ էս էկել, գըրից արինք, տուը վօր պաց արի, ասի մէր Հունէսի ախչիկըն ա, նէ էլ թէնց, ջանօվ ա։ Նըստի պան պէրիմ, կաթա էմ թըխէ, պիրէմ, կի։

Քոչարյան Փառանձեմ Մինասի, 74 տարեկան (Լեռնանցք)

Ձիգդամալ գյուղի խոսվածքով

(ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆ)

Ինչ ասէմ, ամօթ ի անըմ, չի կալի, լիզուս կարճ ա, իրէք տըղէս քընացէլ էն, էկէլ չէն։ Լավ էս արէ, վօր էկէլ էս մէր կէղը, մէր կէղի լիգվընէրը կիմանաս։ Ծէռ ու վօտըս չի պըռնըմ։ Կարին տարէլ ի ճուրը, լըվանըմ ի, ասին կէղը ախչիկ ա էկէ, կըրըմ ա, թօղացի, էկա։

Ասլանյանին գիդո՞ւմ էս, Ըրէվան ա ապըրըմ, յէս էմ պըհէ, մէնձացըրէ։ Կալիս ա, կընըմ մէր կէղը։

էն չախը, վօր թուրքէրը էկէլ ին մէր կէղը, քըվօրտինք ջան, աֆանդէցիք (կօղքի գյուղը) էկան, թէ ծէր էլածը տըվէք, տանէնք, պըհէնք։

Քըշէրնէրը տըռնէրը ղայմըցնըմ ինք, օվ կալիս էր, ծէն էր տալի, պաց չինք անըմ։ Հացը քըցած ուտըմ ինք, մին էլ տէհանք տուը տըվին, մէր ճաղացըն էլ պանըմ էր։ Մէր Մացակը տուս էկավ, ասէց. տու տուս չըկաս, տու տուս չըկաս, համա յէս տուս էկա չարդախը։ Ասի. օ՞վ էք։ Մէր Աղնըվանց Լէվանը, ղօրմի իրան, ասէց. Յէս էմ, տուը պաց արա, տըղէրք կան։ Պաց շարի, տըրանք քընացին։ Տըրանք վօր քընացին հա, պընցրացա չարդախի վէրի կուշտը, տէհա, կէղը լըցվէլ ին։ Յէննա, ախչըկանըս ասէմ, ռավօղը լիսը պացվէց ծէր ճանի վըրա, իմն էլ, տէհա, հէրըս էկավ, ախպօրըս տուն էր կընացէլ։

Ասի.

— Ախպօրիցըս ի՞նչ խաբար, ամի ջան։

Ասէց.

— Կափրէլի կընգանը տարէլ էն։

Բիգունր մէր ակօշկէրը սաղ ճառթէլ ին, ծռմռէլ ին, նրհէնց ին արէ վօր։

Տէրրակրնգանրս էլ տարան, նէ էլ Լրկուֆօրիս էր։ Մի չափաթից յէննա էկավ ցրխրմր կօրած, բրրախէլ ին, էն մրնին տարէլ ին, նա տէսրօվ էր։

Ներիգորյան Կանուշ Փիլօցի, 77 տարեկան (Զիգդամալ)

Հին Բաշինեն գյուղի խոսվածքով

(ԿԱՐՄԻՐԻ ՇՐՋԱՆ)

Ախճիկ ջան, հըմանչում չըէմ, խի՞ էմ հըմանչում, տըհէնց ասիլ մի, անըրէթ. անլուղու. անշատակ. պուրակ մանող մաաթ, հըլիվէր էմ։ Նհէնց բղաշանք արի, ասի կէրէղման կրնացող էմ, կըլխացավանք տար վէչ, տըու էլ տըժար պյան էս ասում։ Կըրիլ մի, վըխծրնիլ մի, կրնամ ճաղացը կամ մին լուղվանիկ կրնգա պրէս գրրից անրէմ։

Էլ մըհի էլ ուղում էս վօռթում ուարէմ վըէր բուգլանը, մէր կէցիցը կէղավարի մի պլան ասըէմ։ Յէս էն չախը օղակավար ի ըշխաղում։ Շատ ի չըրարվում, տըմբրըվըմ ի, կօրծըս շատ էր, ըսկի ժամանակ չի ըրթանում, վըէր մըէր կ'օմը նի մըտնըէմ, մի կ'ամէշ կար, խօտը տամ։

Հա, օղակավարի ի, ինձ մի հանդ ունի լավը չէր, լօխ խօտ էր քըցրէլ։ Կէբանդուն վըէր կալա, ըրնացի խոտր վըէր տըվի, չուըըցըրի, հըվըրէցի, տօմբա տըվի։ Հէնց տօմըէնին էն, վըէր ամըէն մինը մի բըաքա էն։

Բըրախէցի, էկա տուն։ Ամա, էտ տարին կ'օղը շատ էր, վըխէցա կ'ուղանան։ Քըշէրը մըխտկ ըրի, վօր խօտըս կ'ուղանալ դէն, ինձ էլ ունի մի լավ էշ։ Վըէր կացա, էշը վէ կալա, ըրնացի, էշի ջրնջիլը կապէցի վըէտնէրիցըս ու ըրնըլցրի։ Մի վախտ տէհա վըէտիցըս տառթու տըվին, գըռթնացա, պըցըրացա, տէսա հըրնգէր Դանէլյան Արմենակը մըհիկիս մըէր սօլխօզի դիրէկտօրը իմ կըշտին կաղնած, հըըցըրում.

— Խի՞ էս մանկլալի էս քըշէրա կէսումը։ Ի՞նչ կօրծ ունըէս էս չօլի մըջին։

Յէս ըսէցրի վըէր.

— Էս խօտէրը իմըն ա, կաղնըէլ էմ, վըէր կ'օղանան վիէչ.

Սանակյան Հանես Կարապետի, 77 տարեկան

Հա, քըէ մատաղ, մի աման մածուն պիրրէմ, կըէ. էն քաղաքի մածունը գյուղում չըէս ՞ինչ ա՞, ճուրը մի տըէղովըն ա քմինում, մածունը մի աըէղովը։

ՆՈՒՅՆԸ

Մարց գյուղի խոսվածքով (Ալավերդու շրջան)

Քավօրը

Կլարունքվա կօղմը մէր կյէղըմը հարսանիք էր։ Քավօրը խըմէլ էր, հալից ընգէ։ Դէ, քավօրը ի՞նչ անի։ Քավօր ջան, խըմի հարսի կէնացը, քավօր ջան, խըմի փէսի կէնացը, քավօր ջան, էս էլ իմ խաթէր խըմի, սըրա խաթէր խըմի, թէնց ասալ էն, նա էլ խըմէլ ա, վէկալան, տարան իրանց տունը, քընըցրին։ Ըավօղը լիսը վէրպաց իլավ փէսէն էկավ, վէր քավօրի ապրանըրնուն ասնի, Հըրրի. Նըմը տա։ Քավօրը ասէց.

— Յէս էլ էմ կյալի։

— Տու հօ՞ր էս կլալի։

— Հալբաթ մի գործըն էլ յէս ունէմ։

Քաշէցին, ապրանքնուն տարան ճարը։ Էշը ճարը խրմէց, ուզըմ էր մի յանօվը կրնա, քավորը ասէց.

— Էշ ջան, մըխէլի էլ իմ խաթէր խըմի, մըխէլի էլ սըհա խաթէր խըմի։

Էշը լըսէց վոչ։ Էն ա ինչդար պէտկըն էր, էնդար խրմէց։ Դէ էշը վո՞նց կրլըսի։ Քավորը ասէց. յէս էս անասունի ղադամ չըկամ, էշի դադամ խէլք չունեմ, նէ ինչ ղադամ կարաց, էն ղադամ խրմէց։

Ղազարյան Մովսես Հարությունի, 66 տարեկան